



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



2004

296, 297, 298  
299, 300, 301

302, 303, 304,  
305, 306, 307,  
308, 309, 310, 311

2000



375  
4-27  
ՀԱՍԱՐԱԿԱՑ

ԹԵՆ ԳԵՐԱՆ

Հ Ա Մ Ա Ր Ա Կ Ա Յ Թ Ս Ն Գ Ա Ր Ա Ն

Հ Ա Տ Ո Ր Ժ Գ .

Մ Է Ս Մ Է Ր Ը Բ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Հ Ա Մ Ա Ռ Օ Տ

Mesmérisme,

Magnétisme animal.



Չ Մ Ի Ի Ռ Ն Ի Ա

Ի Տ Գ Ա Ր Ա Ն Ի Ե Ղ Բ Ա Ր Յ Տ Է Տ Ե Ե Ա Ն

1858





1  
Faint mirrored text from the reverse side of the page, including the word "LAW" and "BOOKS".

**ԱՐԵՎԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

Faint mirrored text from the reverse side of the page, including the word "ՀԱՅԿԱՆ" and "ԳՐԱԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ".



47.

ՀԱՍՏԵՐԱԿԱՆ ՔԱՆԳԱՐԱՆ

ՀԱՏՈՐ ԺԳ.

Լսյ

306

ՊԵՆՏԵՆ ԻՆՏԵՐՆԱԿՈՆՓԻԵՆ

ՀԱՄԱՌՕՏ



ՋՄԻՒՌՆԻԱ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԵՂԱՐՑ ՏԵՏԵՆԱՆ

1958

17969

UNIVERSITY OF MICHIGAN LIBRARY

ANN ARBOR, MICH.

1892

308

THE UNIVERSITY OF MICHIGAN LIBRARY

ANN ARBOR, MICH.



UNIVERSITY OF MICHIGAN LIBRARY

ANN ARBOR, MICH.

1892

7344-57

ԱՐԿՈՅ ԸՆԹԵՐՑՈՂ

Հ Ա Ս Ա Ր Ա Կ Ա Ց Թ Ա Ն Գ Ա Ր Ա Ն մեկագրով  
սեպտեմբեր 21-ին հասնելով պիտի սկսին ապաւելու հրատարակել  
հետեւեալը : Ասանց մէջ պիտի խօսուի բարձր  
գլխաւոր գիտութեանց Տի Տի աշխարհի շինութեան վրայ :

Գալուստի Արքեպիսկոպոստ :

28-308

306-2003

ՄԻԿ ՔԱՆԻ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՄԻՍՄԻՐԱՐ ԱՆՈՒԹԵԱՆ

ՎՐԱՅ

ՀԱԶԱՐ 734ին Մէսմէր անուանով  
մէկը ծնաւ Գերմանիոյ մէջ և 1766ին  
բժիշկ ընդունեցաւ Վիեննայի մէջ:

Ասիկա Դրութիւն մ' ունէր, որուն  
բնաբանն էր «Ինչպէս որ լուսինը, արեւը  
և միւս երկնային գունտերը երկրիս, ծո-  
ւղուն և օդին վրայ կ'ազդեն, նմանապէս  
Կենդանի և գործարանաւոր մարմնոց վը-  
րայ ալ Ազդուութիւն ու Օրուութիւն  
մ' ունին գլխաւորաբար Չ զերուն վրայ և  
Եւ աս զօրութիւնը՝ Մագնիսական, Թա-  
փանցող, կենդանի, խիստ բարակ հեղա-  
նիւթ մ' է»:

Ահա աս զրութիւնն է, որ շինողին  
անուանովը Մէսմէրութիւն կ'ըսուի և կամ  
Կենդանի Մագնիսաբանութիւն:

Առանկով հաստատուած է թէ մարդս  
կարող է իր Կենդանի Մագնիսութիւնը  
ուրիշ կենդանի և կամ գործարանաւոր

նիւթի մը հաղորդել՝

Եւ թէ ամեն գործարանաւոր մարմին  
նիւթի մը մագնիսութիւն ունի :

— — — — —

Հիմա խօսինք զմարդ Մագնիսացնե-  
լուն վրայ :

Մագնիսացուելիք անձը կընստի (պէտք  
չէ մետաքսեայ բազմոյցի վրայ ըլլայ, և  
ոչ ինքը մետաքսէ հագուստ ունենայ),  
և Մագնիսացնօղը (1) իրմէ աւելի բար-  
ձրիկէկ նստած և դէմինին ծունկերը ի-  
րենին մէջը առնելով, իր ոտքերը անոր  
ոտքերուն քովը կը դնէ. ետքը անոր  
(մագնիսանալու մարդին) երկու բթա-  
մատերը իրեններուն մէջ տեղը առնելով  
աչքերը անոր վրայ կը տնկէ, և ասանկ  
կը կենայ մինչև որ իր և անոր մատերուն  
մէջ տեղը հաւասար ջերմութիւն մը  
հաստատուի. ասկէ ետքը ձեռքերը կը  
քաշէ և մինչև գլուխը գնելով՝ մինչև  
մարմնոյն վարերը թեթև կերպիւ մը քը-

(1) Եւրոպայի մէջ գրեթէ ամեն բժիշկի Մագնիսացնօղ  
է, որուն համար զատ պէ՛տք կ'ունենան. մագնիսացնիլը  
յատուկ կը սովորին, որովհետև զանազան ջղային հիւան-  
դութեանց դեղ է :



սեւրով կ'իջնէ ճիշտ մեր պառաւանց ազօթելուն պէս (1), երբեմն երբեմն ալ (ասանկ շարժմամբ է որ, կ'ըսեն, կենդանի մագնիսութիւնը՝ մագնիսացնողէն դէմինին կ'անցնի) մատերը սրսկելով: Եւ ասանկ կը շարունակէ մինչև որ դէմինը կատարեալ կը քնանայ: յամանակէ մը ետքը ինքնիրեն կ'արթննայ, բայց եթէ քունը վրայէն բռնի հանել ուղուի՝ ձեռաց սրսկելով շարժման ուղղութիւնը կը փոխէ, և հակառակ ուղղութեամբ կը շարժէ, որով և անոր տրուած կենդանի մագնիսութիւնը ձեռաց շարժմամբը կը վերնայ վրայէն:

Ամեն մարդ մագնիսացնելը դժուար բան է, որովհետև կենդանի մագնիսութեան ազդեցութիւնը՝ թէ մագնիսացը-

(1) . Այս գործողութիւնը այսինքն մարդ Մագնիսացրնելը եթէ գիտողապէս զննենք՝ ճիշտ Արեւելեան կանանց Ազօթելուն կը նմանի, և ինչպէս որ մագնիսացնողները դանաղան շարժումներ կ'ընեն՝ նոյնը կը տեսնուի Ազօթող կանանց մէջ ալ. ինչ զարմանալի բան, որ այսչափ դարերէ հետէ Արեւելքի մէջ գործածուած իբր Դեղ արհեստը նորերս Եւրոպայի մէջ իբր նոր գիտութիւն մ' եղաւ, թէ հիւանդութեան և թէ ուրիշ պարագաներու գործածուելով:

նօղին և թէ մագնիսացեալին ֆիզիզապէս  
և բարոյականապէս կաղմուծեանը վրայ  
կայացեալ է : Մագնիսացնօղը պէտք է  
միշտ մագնիսացեալէն աւելի զօրաւոր  
ըլլայ , ապա թէ ոչ՝ չկրնար անօր վրայ  
ազդել :

Մագնիսացնելու ատենը պէտք է մագ-  
նիսացնօղը բարիք մտածէ և ըրած գոր-  
ծողու թեանը վրայ վստահ ըլլի :

Հատ զտրմանալի գործողութիւններ  
կան , որոնք ( վարը պիտի խօսինք ) Մագ-  
նիսացեալ մարդոց վրայ կը տեսնուին .  
բայց ոչ հեղ մը եղօղին , հապա մէկ քա-  
նի հեղ լինօղին , մանաւանդ ընդունա-  
կերուն : Աս զտրմանալի գործողութիւն-  
ներն են , որ Մագնիսացեալ մարդուն  
աչքերը գոց կ'ըլլին , բայց աչքը բացէն  
աւելի աղէկ կը տեսնէ :

Ար գիտնայ գրպաններու , գոց ձեռաց  
մէջինը , և վերջապէս ամեն սրահուած  
բաները :

Կրնայ

Գոց նամակները կարդալ .

Օճնազան հիւանդութեանց դեղեր  
գտնել :

Քաղաքական և առևտրական շարժմանց ապագաները գուշակել, ևն :

Մագնիսացեալ անձանց վրայ երևցած գլխաւոր երևութերէն մէկն ալ ցաւ չի զգալն է . որովհետև կրնաս մագնիսացեալին ասեղ խօթել, ահռան հանել առանց անոր ցաւ մը պատճառելու . ասիկա ան աստիճան է որ Եւրոպայի մէջ վիրաբուժական գործողութեանց մէջ փոխանակ հիւանդը չլռիժօրժով քնացնելու՝ կենդանական մագնիսութիւնով կը քնացնեն, որովև վերստին ցաւ չզգար ( 1 ) :

( 1 ) . Այս ցաւ չզգալը շատ մարդոց վրայ բնական երևութ մ' է . կան անանկ մարդեր , որոնք ցաւի կը գեմանան , ինչպէս 1822ին տեսնուած մարգը և ուրիշներ : Քաղաքի թէսթիթիւս անուն եկեղեցականին համար կը պատմեն թէ այնպիսի թանձր քուն ունի եղեր , որ քնացած ժամանակը մարմնոյն սյրիլը չզգար եղեր : Ասանկ բաներ համեցողութեամբ ալ կրնան ըլլալ , ինչպէս Հնդկաստանի մէջ Փագըրներ կան , որոնք մէկ և շատ հեղ երկու բաղուկին վեր վերցուցած կ'ըլլան մշանջնաւորապէս . ասոնց շիզերնին բաշուած կ'ըլլի և յողուածնին շարցած : Աւրիշներ ալ կան , որոնք 7 - 8 օր շարունակ սրունքնին վեր կը բռնեն : Տիւհամէլ և Տիւթէլէ տեսեր են գիւղացի աղջիկներ , որոնք կարող են եղեր 10 վայրկեան 140 աստիճան ջերմութեամբ տաքցուցած փուրի մէջ կենալ :

Մագնիսացնօղերը պէտք չեն յաճախ  
և կամ վրայ վրայի մագնիսացնեն, ըստ  
որում իրենց կենդանի մագնիսութիւնը  
ուրիշ հաղորդուելով՝ իրենք կը տկարա-  
նան, որմէ կրնայ վատառողջութիւն ծա-  
գել:

Խօսքերնիս բերենք հիմա Սեղան դար-  
ձրնելու և Սեղան խօսացնելու վրայ,  
որնոր ընդհանրապէս աշխարհիս միտքե-  
րը իրեն գրաւեց:

1853ին էր որ Սեղան դարձնելը ծագե-  
ցաւ. Սեղան դարձնելու համար պէտք է  
որ սեղանին բոլորտիքը կայնած մարդիկը  
ձեռքերնին սեղանի վրայ դնեն բթամա-  
տով և ճկոյտով իրարու հաղորդուած.  
միտքով պէտք է գործողութեան վրայ  
մտածել, Ուղել, Բաղձալ որ սեղանը  
դառնայ, ասանկով ան բաղձանքը (կեն-  
դանի հեղանիութը) մարմիննէս կ'ելլէ,  
սեղանին կ'անցնի և զան կը դարձնէ. Ա-  
սիկա ան եղանակաւ լինի, ինչպէս որ  
ուղելով սրունքնիս, ստքերնիս, ձեռ-  
քերնիս և կամ ուրիշ մէկ անդամնիս  
շարժել՝ կը շարժենք, որմէ կ'իմանամք

Թէ մէզմէ սեղտնին անցնող և զան դարձնող հեղանիւթը՝ ճիշդ ան զօրութիւնն է, որ կամեցողութեամբ ուղեղնէս կ'ելլէ, և ուզուած անդամը կը շարժէ :

Գաղղիացւոց Իլլիւսդրասիօն օրագրին մէջը Սիպէրիայէն նամակ մը կար 25 Յունիսի 1853ին գրուած, որ Չերէփանօֆ (նամակը գրողը) տեսեր է 1853ին Լամաներ (1), որոնք Սեղան կը դարձնէին, և անոնց շարժմանցը ուղղութեամբը կողացտուած նիւթերու ուրտեղ ըլլալը կը գտնէին : Կը յաւելուր նաև թէ Չինացիք անհետ ժամանակներէ հետէ գիտեն եղեր Սեղանաշրջութիւնը :

Ըս որչափ արտաքոյ կարգի բան է՝ ևս առաւել Սեղան խօսացնելը՝ քանզի սեղաններուն ոտիցը զարնուածքէն հաշիւներ կը հանեն, անյայտ բաներ խօսացնել կըտան, ևն, ևն :

Սեղանախօսից Աղանդ մը կայ Լըրոպա :

Գանք հիմա Ոգիներուն վրայ :

Հաղար 847ին՝ Սիու Լօրքի երկրին Հի-

(1) Թաթարշահի մէջ Պուտոպի կրօնքին Տալայիւշամա շատուածին բուրմերն են :

տէս վիլ զ իւղին մէջ Պր. Ա ի բմէն կը բը-  
նակէր . ասիկա գիշեր մը իր դրան  
զարնուիլը կը լսէ , և դուռը բանա-  
լով մարդ չգտնէր , ետքը երկրորդ ան-  
գամ ալ կը զարնուի , և վերջապէս եր-  
րորդ , չորրորդ անգամին Ա ի բմէն դու-  
ռը բանալով մարդ չգտնէր . աս արտա-  
քոյ կարգի գործողութիւնը այնչափ կը  
յաճատի որ Ա ի բմէն տաղտկալով ան  
տունէն կ'ելլէ .

Ա տունը նորէն Ղօն Պօքս անունով  
բժիշկ մը կը գայ և կը բնակի իր կնոջ և  
երկու աղջիկներուն հետ . վերոյիշեալ  
դրան զարնուիլը նորէն այնչափ կը կըրկ-  
նուին որ Պօքսին մեծ աղջիկը կը համար-  
ձակի ձեռքերը զարնել՝ հրաւիրելով զու-  
գին ( դուռը զարնող աներևոյթը ) 'ի  
պատասխանատուութիւն , և զարմանքով  
կը լսէ պատասխանը . աս գործողութեան  
մայրն ալ վրայ կը հասնի , ու ան ալ իր  
աղջկանց տարիքը կը հարցնէ , և պատաս-  
խան կ'առնէ մէկուն 15 և միւսին 12 ,  
որ ճիշտ էր . Աինը կ'ըսէ՝ եթէ ոգի մ'ես՝  
երկու հարուած զարկ , և հարուածները  
կը զարնուին .

Ա ոգին Պօքսի ընտանիքին հետ շատ

յարաբերութիւն ունեցաւ :

Ազիներուն գործածած լեզուն շատ զարմանալի է, ինչպէս ռի — է — լու — քու — ղէ — թա :

Միացեալ Նահանգաց հիւսիսային և արևմտեան կողմերը և տեղտեղ այլանդակ երևութեք տեսնուեցան, ինչպէս զանազան ձևով և դունով լուսոյ շարաւիղեր կ'երևէին մութ սենեակերու մէջ, զանազան ձայներ կը լսուէին, ևն, ևն, շատ ուրիշ զարմանալի և պատճառը անյայտ երևութեք, որոնց հաղարար մանաւանդ տեղեակ անձինք մկայ են :

Մէկ խօսքով հիմա անանկ կը դնեն, որ աշխարհի մէջ Ահնդանական զօրութիւն մը կայ, որ ասանկ մտքէ դուրս բաներ կը գործէ :



Արբեմն երեցած տեսողական զարմանալի զօրութեանց համար կենդանական Մագնիսութիւն է, կըսեն, ինչպէս՝ 1725ին Մերթ-ը Լրագրին մէջ գրուած կար որ լիզպօնի մէջ երիտասարդ կին մը կը գանուէր, որուն տեսողւելը այնչափ զօրաւոր էր և թափանցող՝ որ կըրնար գետնի տակ եղած ջրերը գիտնալ :

Անվէրսի մէջ բանտարկեալ մը կար անանկ սուր տեսողութիւնով մը, որ կրնար լաթի, կերպասի տակ ծածկուած որևիցէ բանը գիտնալ. դարմանալին հոն է որ կարմիր լաթին չէր կրնար թափանցել.

Այս տեսողութեան զօրութիւնները տեսնելով կրնանք ըսել որ կանանց Ա. չք նաղար ըսուած գէշ հարուածը կարելի է՝ մէկդի թողլով այնչափ չափազանցութենէրը. կապոյտ աչքը աւելի ազդու է, կ'ըսեն, աս հարուածիս մէջ, և ինչպէս նաև լուսոյ ? դոյներուն մէջ կը տեսնենք, որ ամենէն զօրաւորը կապոյտն է. կապոյտ զգեստ հագնիլը և կապոյտ կար վրան կրելը աչքի հարուածին պաշտպանողական է, կ'ըսեն:

Խորենացին Երուանդայ համար կ'ըսէ. «Բայց ասէն զԵրուանդայ՝ ըստ հմայից գժնեայ գողովական հայեցուածով վասն որոյ ընդ այգանալ աշալրջացն՝ սովորութիւն ունել սորասաւորացն արքունի վէ մս որձաքարեայս ունել ընդ գէմ Երուանդայ, և 'ի հայեցուածոցն գժնութենէ ասէն սրայթիլ որձաքար վիմացն».

Խորենացին զաս կ'ամ առաստել կը գ'նէ



և կամ զիւական զօրութիւն մը . կը-  
րուանդայ առ զօրութիւնը վերոյիշեալ  
դէպքերուն նայելով բնական երևոյթ  
մը էր .

Չարմանալի բան մ'ալ անասնոց ոմանց  
կարմիր գոյնէն բարկանալը , վախնալն է ,  
ինչպէս վագրը , ցուլը , ևն , մանաւանդ  
որ (ինչպէս Վուսաբանութեան մէջ կը  
տեսնենք) լայսին կարմիր գոյնը այնչափ  
զօրաւ որ չէ . ոմանք կ'ըսեն որ կարմիր  
գոյնին կրակի նմանին է որ անասնոց  
վրիս կը պատճառէ :

Կամեցողութեամբ հիւանդութիւնը  
կրնայ հիւանդ անձէն ելլել և առողջ  
անձի մը փոխադրուիլ , եթէ երկու  
կողմէն ալ հաճութիւն ըլլայ :

Սահկ կ'ըսեն որ կրնայ մէկը Փարիզէն  
Կոստանդնուպօլսոյ մէջ մարդ մը մագ-  
նիսացնել , եթէ երկուքն ալ գիտնան  
որ ժամին և որ տեղ :

Սէրը կենդանական մագնիսութիւն մը  
է , կ'ըսեն նաև , որով երկու անձեր

իրարու կը կապուին, նոյնպէս ցանկու  
թիւնը :

Քնաշրջու թիւնը ( սօնամայիւլը (1) զար-  
մանալի երևոյթ մ'է, որ մարդու ս վրայ  
կ'երևի :

Քնաշրջիկ կ'ըսուին անոնք որ գիշերը  
քուներնէն կ'ելեն, կը խօսին, կը գրեն,  
նուագ կը զարնեն, կը կարդան, ևն, ևն,  
ամեն կերպ բանը կ'ընեն՝ թէպէտև քուն  
եղած, ետքը երբ արթննան՝ ամենևին  
չեն յիշեր ըրածնին :

Քնաշրջիկերուն աչքերը բաց կ'ըլլան,  
բայց չեն տեսներ :

Ակեղեցականի մը համար կը պատմուի,  
թէ քնաշրջիկ եղած գիշերը կ'ելէ ու  
թուղթ առնելով խրատներ կը գրէ եւ  
ղեր՝ շարագրու թեան ևնիւթին ամենևին  
սխալ մը չընելով. ուրիշները վատահըլ-  
լալու համար որ թէև աչքերը բաց բայց  
չտեսներ՝ գրած ատենը թուղթ մը կը  
բռնեն իր աչքին ու գրածին մէջ տեղը.  
բայց անիկա անսխալ ու զգուծեամբ կը

(1) . Գաղղիարենի մէջ թէ մազնիսացեալներուն ե թէ  
քնաշրջիկաց սօնամայիւլ կ'ըսեն :

չարունակէ իր գրութիւնը . մէկ երես  
թղթի մը մինչև կէսը գրած ըլլալով, ան  
թուղթը առջևէն կ'առնեն, և ուրիշ  
թուղթ մը առջևը կը դնեն . բայց քո-  
նաչըջիկը ամենևին չչիօթնելով վերստին  
կը սկսի թղթին մէջ տեղէն գրել .

Ասանկ շատ զարմանալի երևութեք կըր-  
նան տեսնուիլ Քնաչըջկաց վրայ .

Սագնիսացեալները և ջերմնատագնապ  
տենդով հիւանդերը եղած է որ այլան-  
գակ լեզուներ խօսին .

Երեակայութիւնը սոսկալի ազդեցու-  
թիւն ունի մարդուս վրայ .

Եթէ մարմիննուս վրայ ցաւ մը ունե-  
նանք, ու անոր վրայ մտածենք և զան  
առաւելեալ երեակայենք՝ օգէ օր ցաւը  
կ'աւելնայ .

Կը գտնուին ալ ոմանք որոնք երբ հի-  
ւանդութեան ստորագրութիւն մը կար-  
դան՝ երեակայութիւննին կը բորբոքի  
և կը կարծեն որ նոյն հիւանդութիւնը  
իրենց վրայ եկած է, և որուն նշանները  
յայտնի կը տեսնեն իրենց վրայ .

Մարդեր կան որ զիրենք հիւանդ կը կարծեն թէ և առողջ :

Անգամ մը մարդու մը դեղ տուին աւելերէ շինուած դեղահատ (կապ), որն որ փորլուծութիւն պատճառելու է, ըսին առնողին . առնողը յիրաւի դան իբր ադդու դեղ երեակայելով կ'առնէ և փորլուծութիւն կ'ունենայ :

Երեակայութեամբ մինչև անգամ մեռնող կայ :

Աղախին մը կը տեսնէ որ իր տիրուհւոյն երակը վերաբոյժը կը ճեղքէր, ասկէ կը սարսափի և վախէն իր բազուկին ալ նոյն տեղը կարմիր բիծ մը կ'ըլլի, և հոն ցաւ կը զգայ :





Ի ՆՍԻՆ ԵՇԽԵՏԵՍԻՐ ՌԹԹԵՆԵԼԸ

Եփեսոսի մանուկներ

Սեպեւ, Տիեզեր

Չարեւ

Սաբինի

Գանկաբանութիւնն համարօք

Երկրաբանութիւնն 99

Չգողաբանութիւնն 99

Քրիստոսաբանութիւնն 99

Ելիպրաբանութիւնն և

Կալվանաբանութիւնն 99

Կենդանաբանութիւնն 99

Բոսաբանութիւնն 99

Չէրմաբանութիւնն 99

Երողջաբանութիւնն 99

Եսպրաբանութիւնն 99

Էրասաբանութիւնն 99

Սագնիսաբանութիւնն 99

Մեասերաբանութիւնն 99

Ի ՆՄԻՆ ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵՆԷՆԷ

Եգիպտական նշանագիրք	
Սեպեւ, Տեպեւ	
Քապեւ	
Սաբեպեւ	
Տեգրանոսեւ	
Գանկաբանոսեւ	համարօք
Լաւրաբանոսեւ	»
Չգողաբանոսեւ	»
Վիտաբանոսեւ	»
Ելիպրաբանոսեւ	և
Կալվանաբանոսեւ	»
Կենդանաբանոսեւ	»
Բոսաբանոսեւ	»
Սերմաբանոսեւ	»
Երողաբանոսեւ	»
Եսպողաբանոսեւ	»
Լոսաբանոսեւ	»
Սագնիսաբանոսեւ	»
Մեասիրաբանոսեւ	»
Նճանաբոսեւ	»
Սանդրաբանոսեւ	»
Չոյնաբանոսեւ	»







